կտակագրութեամբք ի գործ դրուիլը օրհնեալ Ազգիս հանրութեանը ուրախութեամբ սրտի հաղորդելով, կը խոստանամք ուրիշ անգամ կտակագրութեանց պայմաններն ալ Միօնիս միջոցաւ հրատարակել ի պարծանս մեծանուն կտակողին և ի ցնծութիւն բովանդակ Ազգիս ։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

(Տես Թիւ Ե. երես 77։)

Ա. Հարցման լուծումն է՝ 1760 հեծեալ։
Բ. Հարցման լուծումն է՝ 144 հատ մարգարիտ, և գին նորա 6720 դրամ։

Հարցուած Գ.

Այսպէս լուայ ի վարդապետէն, եթէ գողեան մտին ի Մարկիանոն տրիկլին, և գողացան զկէս և զչորեւոր գանձին ։ Իսկ մտեալ գանձաւորացն գտին ՆԻԱ (չորեքհարիւր քըսան և մի) կենդինար, և Վ և Ո (երեք հազար եւ վեց հարիւր) դահեկան ։ Արդ, գիտեա ի մնացելոցս թէ ամենայն որչափ էր գանձն ։

Հարցուած Դ.

Հուռք (թոշակ) ուխտին սրբոյն Սոփիայ, զհինգ մասն առնուն սարկաւագունքն. եւ Ժ մասն առնուն քահանայքն. եւ Մխ լիտր առնուն եպիսկոպոսքն. և Ս (երկու հազար) լիտր այլ ուխտն ։ Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի՛ լիտր լինի հուռքն ։

Հարցուած Ե.

Հուռք սպայիցն բաշխի այսպէս. Դ մասն պատուաւորացն. Ը մասն աւագացն. և ճծ կենդինար այլ հեծելոյն ։ Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի՛ կենդինար լինի ։

Հարցուած Զ.

Հազար (մառուլ) կայր ի մի պարտիզի, և հօտոմ մի եմուտ ի պատճառ զբաւսանաց. եւ եկեր զէ եւ զժէ մասն հազարոյն, և իմացեալ իմ զորկորէութիւն առն, հանի զնա արտաքս. և մտեալ համարեցի զնա, և գտի ունջ (թանէ կամ տէմէթ) ճժ ։ Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի՛ ունջ կերեալ է հօտոմին ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Վսեմափայլ Իզզէթ փաշային քաղաքիս պայծառութեանը համար տարած հոգողութեանը վրայ աւիթ ունեցանք խօսելու նախորդ թիւերնուս մէջ ։ Անցեալ ամսոյն նորոգել տուաւ նաև քաղաքիս Յոպպէի կամ Հայր Աբրահամու (Պապ—էլ—Խալիլ) ըսուած դրան փեղկերը, որոյ համար կ'ըսուի թէ 300 օսկի ծախք եղաւ ․ յիշեալ փեղկերը տախտակեայ են ու երկաթապատ ։

— Վէննայու Մխիթարեան ուխտի միաբաններէն Արժանապատիւ Յովսէփ վարդապետը Կաթրճեան և Արժ. Ղարսեղ վարդապետը Նուրիճանեան սուրբ քաղաքս եկած ըլլալով, հետեւեալ օրը (ապրիլ 10 ին) փութացին գալ ի Ս. Աթոռս իրենց ողջոյնն ու յարգանքը մատուցանելու Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, որ արժանաւոր մեծարանօք ընդունեց զիրենք ։ Յովսէփ վարդապետը ծանօթ է ազգիս իւր գըրաւոր երկասիրութիւններովը, մանաւանդ անցեալները հրատարակած « Հիմնական տարբերութիւնք Կաթուղիկէ և Լուսաւորչական դաւանու-

digitised by A.R.A.R.@